

Յաւուրսն յայնոսիկ ոմանք ի խռովւաց,
Առանց բանաւոր ինչ պատճառաց,
Զբրկել ջանային՝ յաթոռոյն փառաց,
'Ձ Յօհան Պատրիարգ՝ սիրեալն ի բազմաց :

Եւ անդ ընդ նորա՝ դընել ջանային,
ԸզՊետրոս ֆիւթիւր՝ յոյժ աղմբկալին,
Որ լինէր յետոյ՝ ներհակ գբլխովին,
Զահկեցի Ղազար՝ կաթուղիկոսին :

Պատճառանք որոց՝ յայս ինչ կայանայր
Թէ ի նզովել Յօհան հեռանայր,
ԸզՔաղկեդոնիկս եւ Ղեւոնդ սուրբ հայր,
Ոչ հալածեալ զայն, որ 'գհետ այնց երթայր :

Զայս ինչ նոյն ֆիւթիւր վաղ իսկ հըռչակեալ,
Մըխեալ էր յուղեղս անձանց ռամկացեալ,
Որով երկատէր՝ զազգ մեր ամբօխեալ,
Ի միջի որոյ զաղմուկ յարուցեալ :

Սոյն վատթար խորհուրդ բընաւ չէր հաճոյ,
Իշխանաց Հայոց կոստանդնուպօլսոյ,
Եւ ոչ անձնիւր խոհական մարդոյ,
Այլ՝ միայն խուժդուժ ռամկաց ժողովոյ :

Ընդ որս էին իսկ՝ ոմանք ի յետնոց,
Այլ եւ այլ եկաց եւ կեսարացւոց,
Որք շահեալ անդէն՝ գումար դըրամոց,
Շքեղ թըւէին յաչըս խուժայնոց :

Այս վատ խումբ Հայոց՝ ախտակրեալ անգամ,
Խըմբիւր ի ծածուկ՝ յայտնի շատ անգամ,
'Ձ հովուէն զանպատեհս գողէր զետ շարկամ,
Զայնն որոյ սարսեալ՝ ցօդայնոց երամ :

Պակուցեալ ուրեմն՝ Յօհաննէս բաբուն,
Պատրիարգն Հայոց Հըռովմայ՝ Նորոյն,
Փախըստեայ գաղէր զանձն ի ներքնատուն
Յարկին Ը---րէանց՝ որ պերճն էր տեղւոյն :